ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄ

Հայաստանում հասարակության նոր սոցիալական կառուցվածքի ձևավորման գործընթացի հիմնական դրսևորումներից է բանվոր դասակարգի կարգավիճակի արմատական փոփոխությունը: 80-ական թվականների վերջերին Խորհրդային Հայաստանում բանվորները կազմում էին ամենամեծ սոցիալական խումբը, որը հետպատերազմյան չորս տասնամյակում ունեցել է քանակական և որակական աննախընթաց մեծ աճ: 1940թ. ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվորների թիվը 93,5 հազար էր, իսկ 1986թ. այն հասավ 953 հազարի, այսինքն՝ աճել էր ավելի քան 10 անգամ: Բանվորները կազմում էին հանրապետության աշխատավորների ավելի քան 66%-ը:[1]

Եթե նշված ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ում բանվորների թիվը ավելացել է մոտ 4 անգամ, ապա Հայաստանում 10 անգամ: Եվ դա պատահական չէր, քանի որ Հայաստանի տնտեսական-արդյունաբերական զարգացման տեմպերն էլ շատ ավելի բարձր էին միութենականի համեմատությամբ:

Ինչպես ամբողջ Միությունում, այնպես էլ Հայաստանում գործում էր սոցիալական զարգացման այն օրինաչափությունը, որ հասարակական արտադրության մեջ գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների արմատավորման, այսինքն՝ գիտատեխնիկական բուռն առաջադիմության համեմատ իջնում են բանվոր դասակարգի քանակական աճի տեմպերը: Այսպես, 8-րդ հնգամյակում հանրապետության բանվորների թիվն ավելացել է տարեկան միջինը 6 տոկոսով, իսկ 1971-1978 թ.՝ 4 տոկոսով:

Չնայած դրան, բանվորների բացարձակ թիվը 70-ական թվականներին ավելացել է մեծ չափով՝ 242 հազարով, իսկ 1980-1986 թ.՝ 111 հազարով:[2]

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գիտատեխնիկական առաջադիմությունն ամեն տարի առաջ է բերում 500 նոր մասնագիտություն: Այնպես որ Հայաստանի բանվորների թիվը գնալով աճել է մինչև 90-ական թվականները, երբ փլուզվեց տնտեսական կյանքը:

Բազմազան էին հանրապետության բանվոր դասակարգի շարքերի համալրման աղբյուրները: Դրանց մեջ գլխավորը եղել է գյուղացիությունը: Սակայն համալրման տվյալ աղբյուրը 70-ական թվականներին կորցրեց իր նախկին նշանակությունը: Համալրման գլխավոր աղբյուր դարձավ բանվոր

[1] Народное хозяйство Арм. ССР, стат. Ежегодник, Ер. 1987, стр. 190.
[2] Народное хозяйство Арм. ССР, Ер. 1987, стр. 190.

դասակարգի սեփական վերարտադրությունը հատկապես արդյունաբերական խոշոր կենտրոններում:

Այդ ընթացքում քանակական խոշոր փոփոխություններ են կատարվել հանրապետության բանվոր դասակարգի ցուցային կառուցվածքում և սեռային կազմում: Ամենանշանակալիցը բանվորների ինդուստրիալ ջոկատի մեծ աճն էր: Ինդուստրիալ ջոկատի /արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի բանվորությունը/ տեսակարար կշիռն անցնում էր ամբողջ բանվոր դասակարգի 60 տոկոսից:

Բանվոր դասակարգի ինդուստրիալ ջոկատի առանցքը արդյունաբերության բանվորությունն էր, որի թիվը 1980-86թթ. 139,4 հազարից հասել էր 263,1 հազարի, այսինքն՝ վեց տարում աճել էր 56 տոկոսով:[3] Բացարձակ թվով աճել են հանրապետության բանվոր դասակարգի բոլոր ջոկատները, առավելապես բարձր տեմպեր են ունեցել շինարարականն ու գյուղատնտեսականը: Նշված ժամանակահատվածում շինարարության ծավալների խիստ ընդլայնումը նպաստել է նաև այդ ցուցի բանվորների թվի աճին: 1960-1970թթ. շինարարության բանվորների թիվը ավելացավ մոտ 70 տոկոսով, 44,7 հազարից հասնելով 74,7 հազարի, իսկ հաջորդ տասնամյակում սկսեց այն նվազել և 1976թ. կազմեց 70,4 հազար: Դա շինարարական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացման արդյունքն էր:

Հանրապետության բանվոր դասակարգի ամենամեծ քանակական փոփոխությունը տեղի է ունեցել նրա գյուղատնտեսական ջոկատում, որի թիվը 1960թ. 26,8 հազարից 1986թ. հասել էր 112,6 հազարի /աճը ավելի քան 4 անգամ/: Դա բացատրվում է նշված ժամանակահատվածում պետական գյուղական տնտեսությունների /սովխոզների/ թվի բավական արագ աճով. 83-ից այն հասել էր 523 –ի:[4]

Անցյալ դարի վերջին տասնամյակներին հանրապետության բանվորության ցուցային կառուցվածքի աչքի ընկնող փոփոխություններից է սպասարկման բնագավառում նոր ջոկատի քանակական աճը, որի օբյեկտիվ հիմքը ժողովրդական տնտեսության արտադրական և ոչ արտադրական ցուցերի միջև աշխատող բնակչության վերաբաշխումն էր հօգուտ վերջինի: 1970-1986թթ. նյութական արտադրության բնագավառում աշխատողների քանակը 74,8 տոկոսից իջել էր 71,2 տոկոսի, իսկ ոչ արտադրական ոլորտում 15,2 տոկոսից բարձրացել է 28,8 տոկոսի:[5] Նույն տասնամյակներում խոշոր փոփոխություններ են կատարվել նաև հանրապետության բանվոր դասակարգի սեռային կազմում: Դա ամենից առաջ բացատրվում է կանանց աշխատանքի

---

[3] Народное хозяйство Арм. ССР, стат. Ежегодник,Ер. 1987, стр. 74.
[4] Նույն տեղում՝ էջ 147:
[5] Народное хозяйство Арм. ССР, стат. Ежегодник,Ер. 1987, стр. 189.

սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմամբ, որը հնարավորություն տվեց շատ կանանց ընդգրկել ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: 1970-1986թթ. բանվոր ու ծառայող կանանց թիվը ավելացել է մոտ 300 հազարով:

Այսպիսով, 80-ական թվականների վերջին հանրապետության բանվոր դասակարգը դարձել էր աշխատավորների ամենամեծաթիվ սոցիալական խումբը: Այդ ժամանակ նա ունեցել էր նաև որակական մեծ աճ:

Հանրապետության բանվոր դասակարգի որակական մեծ աճը ամենից առաջ դրսևորվում էր նրա կուլտուր-տեխնիկական մակարդակի անընդհատ բարձրացման մեջ: Բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման հիմքն ու վճռական պայմանը նրա կրթվածության աճն էր, որը տեղի է ունեցել հանրապետության ամբողջ բնակչության, հատկապես նրա զբաղված մասի կրթական մակարդակի բարձրացման հիքի վրա: 1000 բանվորից 1959 թ. բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեին 492-ը, իսկ 1979 թ.՝ 831-ը, այսինքն՝ ավելի քան 83 տոկոսը:

1960-ական թվականներից միջնակարգ դպրոցը դարձել էր բանվորության շարքերի համալրման հիմնական աղբյուր, իսկ միջնակարգ կրթությունն էլ բարձրորակ բանվորական կադրերի ձևավորման կարևորագույն պայման:

Կարճ ժամանակում Հայաստանում ստեղծվեց միջնակարգ պրոֆտեխնիկական ուսումնարանների մեծ ցանց: 1979 թ. արդեն գործում էին 49 այդպիսի ուսումնարաններ, որտեղ սովորում էին 24,4 հազար պատանիներ: Հաջողությամբ էր լուծվում նաև արտադրության մեջ աշխատող բանվորների միջնակարգ կրթության ապահովման խնդիրը, որի հիմնական միջոցը բանվոր երիտասարդության երեկոյան դպրոցն էր: 1978-79 ուս. տարում հանրապետությունում գործում էին երեկոյան հանրակրթական 151 դպրոց, որտեղ սովորում էին արտադրության մեջ աշխատող 34 հազար երիտասարդ:

70-ական թվականներին նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նաև բանվորների բարձրագույն կրթության համար: Այդ առումով ամենախոշոր միջոցառումը բուհերին կից նախապատրաստական բաժանմունքների ստեղծումն էր: Արտադրության մեջ առաջ էին եկել բանվորական այնպիսի բարդ մասնագիտություններ, որոնք պահանջում էին միջնակարգ մասնագիտական ու երբեմն բարձրագույն տեխնիկական կրթություն: Այնպես որ, այդ հաստատությունները ավարտելը չէր հանդիսանում մտավորականության շարքերն անցնելու պարտադիր պայման, իսկ շատ դեպքերում չէր փոխվում բուհը հեռակա կարգով ավարտած բանվորների սոցիալական դրությունը, իսկ ցերեկային բաժինների շրջանավարտները հաճախ արտադրության մեջ զբաղեցնում էին բավորական տեղեր: Գիտատեխնիկական առաջադիմության խորացման հետ կապված՝ այդ կարգի բանվորների թիվը մեծացել էր հանրապետությունում: Վերջինս պայմանական կոչվում էր բանվոր-ինտելիգենցիայի ջոկատ, որն իր

արտադրական գործունեության մեջ զուգակցում էր մտավոր և ֆիզիկական աշխատանքի գործառույթները:

1960-ական թվականներին հասարակական արտադրության մեջ կատարված տեղաշարժերը դրեցին այն պահանջը, որ բարձրորակ բանվորական կադրեր կարելի է պատրաստել նրանց պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության ճանապարհով: 1960թ. հանրապետությունում գործում էին ընդամենը 12 պրոֆտեխուսումնարաններ: 1986 թվականին դրանց թիվը հասավ 103-ի, որտեղ սովորում էին 47,2 հազար երիտասարդ:[6] Ըստ որում Հայկական ԽՍՀ-ում պրոֆտեխկրթության համակարգը զարգացել է շատ ավելի բարձր տեմպերով, քան Միության մեջ:

Հանրապետության բանվոր դասակարգի պրոֆեսիոնալ որակական աճը դրսևորվում էր ոչ միայն ժամանակակից արտադրությունը հաջողությամբ իրականացնելու գործում, այլև նրանց ծավալած նորարարական շարժման մեջ, որը 70-80-ական թվականներին առավել զանգվածային բնույթ ստացավ. նշված ժամանակահատվածում նկատելիորեն բարելավվել էր բանվոր դասակարգի սոցիալական դրությունը: Այսպես, բանվորների ամսական միջին աշխատավարձը 1970 թ. 131,1 ռուբլուց 1986 թ. հասել էր 218,9 ռուբլու:[7]

Այսպիսով, 1980-ական թվականների վերջին հանրապետության բանվորների 950հազարանոց բանակը համարվում էր խորհրդային բանվոր դասակարգի լավագույն ջոկատներից մեկը, որն աճում էր կրելով՝ քանակական ու որակական խոշոր փոփոխություններ, բարձրանալով սոցիալական զարգացման նոր աստիճանի:

Անկախացման առաջին տարիներին Հայաստանում տնտեսական կյանքը լիովին փլուզվեց, փակվեցին արդյունաբերական ձեռնարկությունները և բանվորները փողոց շարտվեցին: ԽՍՀՄ փլուզման հետևանքով Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը հայտնվեց ծանր վիճակում. ձեռնարկությունների զգալի մասը դադարեց գործելուց: 1990-93թթ. ԱՊՀ երկրներից ամենամեծ անկումն ապրեց Հայաստանի արդյունաբերությունը՝ մոտ 60,3%: Միայն 1992 թվականին նախորդ տարվա նկատմամբ արձանագրվեց ՀՆԱ-ի 41,8% անկում՝ ԱՊՀ համանման միջին ցուցանիշը գերազանցելով ավելի քան 6 անգամ: Դա տնտեսական անկման բարձրագույն կետն էր: 1992թ. միայն արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմեց նախորդ տարվա 51,8%-ը:[8] Ինչպես այս, այնպես էլ հետագայում պետության կողմից առանց ձեռնարկությունների վերագործման անհրաժեշտ պայմանների ու ժամկետների սահման-

---

[6] Народное хозяйство Арм. ССР, стат. Ежегодник, Ер. 1987, стр.194.
[7] Նույն տեղում՝ էջ 193:
[8] Տե՛ս Արդյունաբերություն 1990-97թթ., << վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, Ե., 1999, էջ 7:

ման ոչ գրագետ կատարված սեփականաշնորհումը հանգեցրեց ձեռնարկությունների մեծ մասի գործունեության դադարեցմանը: Հազարավոր բանվորներ և մասնագետներ դարձան գործազուրկ: Այս ամենի հետևանքով արմատապես փոխվեց բանվոր դասակարգը: Անմիջապես ու արագ կերպով փոխվեց նրա կարգավիճակը, կորավ նախկին դերը, իսկ նորն էլ դեռ ձեռք չի բերել:

Բանվորների կարգավիճակում կատարված արմատական փոփոխությունն սկսվեց նրանց քանակի արագ կրճատումով: Պաշտոնական տվյալներով 1990-1996թթ. արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին տարեկան թվաքանակը նվազել է ավելի քան 250 հազար մարդով: Ընդ որում այդ ընթացքում ծառայողների թիվը ավելի քիչ է նվազել, քան բանվորներինը: Արդյունաարտադրական անձնակազմի թվաքանակի նվազումն իր բացարձակ մեծությամբ գրեթե բաժին է ընկնում մեքենաշինության ու մետաղամշակման և թեթև արդյունաբերության ճյուղերին: Զբաղվածության անկումը խիստ նկատելի է շինանյութերի, քիմիական և սննդաարդյունաբերության ճյուղերում: Թեթև արդյունաբերության ճյուղում խորհրդային տարիներին աշխատող 130 ձեռնարկություններից այսօր աշխատում են միայն 40-ը:[10] Արդյունաբերության արտադրական անձնակազմի մեծ չափով նվազումը հետևանք էր ոչ թե ինտենսիվ զարգացման գիտատեխնիկական խոշոր առաջընթացի, այլ արտադրության մասշտաբների կրճատման: Քանի որ մասնավոր ձեռնարկատերերի ձեռք բերած կապիտալն անմիջապես չդրվեց արտադրության մեջ, որպեսզի կասեցվեր մեծ չափերի հասած արդյունաբերության փլուզումը: Եվ որպես բնական արդյունք առաջ եկան աշխատանքի շուկայի ձևավորման և զբաղվածության բարդ հիմնահարցեր: Հսկայական չափով արտադրության կրճատման հետևանքով տասնյակ հազարավոր մարդիկ մնացի գործազուրկ: Խորացավ աշխատանքի առաջարկի ու պահանջարկի անհավասարակշռությունը: Տնտեսության ազատականացումը առաջ բերեց աշխատուժի տեղաշարժ՝ պետական սեկտորից դեպի մասնավորը: Հանրապետությունում տարեցտարի ավելացավ գործազուրկների թիվը: 1992թ. հանրապետության տնտեսության մեջ զբաղվածների թիվը կազմել է 1.578 հազար մարդ, գործազուրկներինը՝ 21.1 հազար, 1996 թվականին՝ համապատասխանաբար 1.436 և 147.9 հազար մարդ, 1999թ.՝ 1.298 և 164.2 հազար մարդ, իսկ 2000թ.՝ 1.283 հազար և 169.5 հազար մարդ:[11] Ըստ տարածաշրջանների՝ 2000թ. գործազրկության ամենաբարձր մակարդակը գրանցվել է երկրաշարժի գոտում՝ Շիրակում /23.3տոկոս/, Լոռիում /17տոկոս/, ինչպես նաև Սյունիքի մարզում /20,8 տոկոս/: Երևանում գրանցված

---

[9] Վ. Խոջաբեկյան, Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Ե., 1998, էջ 191:

[10] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» 5 փետրվարի 2003:

[11] Մարդկային զարգացման ազգային զեկույց, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Հայաստան 2001, էջ 101:

գործազրկության մակարդակը եղել է 12,2 %[12]: Փաստորեն, գործազրկությունը հասավ աննախադեպ չափերի՝ շուրջ կես միլիոն մարդ[13]: Գործազուրկների շարքերը լրացնում էին փախստականները, որոնց զգալի մասը զբաղվածության ծառայություններում գրանցված չէ մի քանի պատճառներով: Գործազուրկների բանակի համալրումը ընթանում է հասարակության բոլոր սոցիալական խավերի ու շերտերի հաշվին: Աշխատանքային ակտիվ տարիքի հոծ զանգվածներ, հայրենիքում զբաղմունք և ապրուստ վաստակելու հնարավորություն չունենալով, բռնեցին արտագաղթի ճանապարհը: Մի մասն էլ համալրեց մանրավաճառների, վերավաճառողների, գյուղատնտեսության մեջ աշխատողների և պատահական այլ զբաղմունք ունեցողների շարքերը: Պրոֆեսիոնալ բարձր մակարդակ ունեցող բանվորական կադրերը, որոնք աճել էին տասնամյակների ընթացքում, փոշիացան՝ չգտնելով իրենց պրոֆեսիոնալ կարողությունները գործադրելու ասպարեզ: Բանվոր դասակարգի վիճակը պայմանավորված է աշխատանքային ներուժի վիճակով, որի կարևոր մասն է կազմում այդ սոցիալական խումբը: Անցման շրջանում փոշիացավ հանրապետության աշխատանքային ներուժը, այդ թվում և բանվոր դասակարգը:

Խորհրդային շրջանում աշխատանքի տեղավորվելու խնդիրն առանձին բարդություն չէր ներկայացնում: Անցումը շուկայական հարաբերություններին առաջին պլան մղեց աշխատանքի շուկայի և զբաղվածության ապահովման պրոբլեմը, որի լուծումը բավական ջանքեր էր պահանջում: Կարևոր է նշել, որ հանրապետությունում անցման առաջին տարիներին նոր տնտեսակարգին համապատասխան աշխատանքային շուկայի ձևավորման ընթացքի վրա մի շարք բացասական գործոններ էին ազդում: Դրանցից գլխավորը տնտեսական կյանքի փլուզումն էր: Որոշակի բացասական ներգործություն ունեցավ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը, ավերիչ երկրաշարժը, ղարաբաղյան ազատագրական պատերազմը, հանրապետության շրջափակումը, էներգետիկ ճգնաժամը և այլն: Այդ ամենի հետևանքով ավելի խորացավ աշխատանքի առաջարկի ու պահանջարկի միջև առաջացած ճեղքվածքը, ավելի ուժեղացավ լարվածությունն աշխատանքային շուկայում՝ խիստ կրճատելով աշխատուժի գործադրման հնարավորությունները:

Սեփականաշնորհման հետևանքով սկսեց արագորեն ծավալվել տնտեսության մասնավոր հատվածը, որտեղ զբաղվածների տեսակարար կշիռը տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թվաքանակում 1992-2001թ. աճել էր 2,5 անգամ՝ կազմելով մոտ 74 տոկոս, մինչդեռ 1992 թ. այն 29,8

---

[12] Հայաստան 2001, Վիճակագրական գրքույկ, էջ 16:
[13] ՀՀ Ազգային Արխիվ, Ֆ2264, g1, գ52, էջ 1-25:

տոկոս էր: Հակառակ դրան՝ կրկնակի նվազել էր պետական հատվածում զբաղվածների տեսակարար կշիռը՝ կազմելով ընդամենը 25,4 տոկոս:[14]

Նոր պայմաններում բանվորներն իրենց աշխատանքային գործունեությունը պետք է ծավալեին մասնավոր սեփականատերերի մոտ, նոր հայ կապիտալիստների մոտ: Բնականաբար փոխվում էր նրանց սոցիալական դրությունը: Նրանք դառնում էին վարձու աշխատողներ, այսինքն՝ ձևավորում էր հայկական նոր պրոլետարիատը, վարձու աշխատողների դասակարգը՝ իր համապատասխան բնույթով, բնորոշ գծերով ու նոր հոգեբանությամբ:

Խորհրդային շրջանում տասնամյակներ շարունակ հանրային սեփականության հիմքի վրա գաղափարական դաստիարակչական աշխատանքով փորձ էր արվում բանվոր դասակարգի մոտ արմատավորել սոցիալիստական համակեցության կանոններ, կոլեկտիվիզմի հոգեբանություն: Եվ դա մասամբ հաջողվում էր: Շուկայական հարաբերություններին անցման շրջանում փոխվեցին նախկին արժեքները: Բանվորների մոտ տարերայնորեն սկսեց ձևավորվել նոր հոգեբանություն՝ վարձու աշխատողի հոգեբանություն, գործատուի կամքին ենթարկվելու, նրան հնազանդորեն ծառայելու հոգեբանություն: Եվ դա հատկապես անցման շրջանում, երբ դեռևս չէր ստեղծվել բանվորների շահերի պաշտպանության համակարգ, այն, ինչ որ կա դասական կապիտալիզմի երկրներում: Անգամ արհմիութենական կազմակերպության գործունեությունը չի նկատվում բանվորների շահերի պաշտպանության հարցում: Ձևավորվող շուկայական հարաբերությունների պայմաններին համապատասխանող աշխատանքային օրենսդրության բացակայությունը ծանր կացություն էր ստեղծում բանվորների համար: ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը ընդունվեց միայն 2004թ. նոյեմբերի 9-ին, սակայն այն լիարժեքորեն չի արտացոլում իրավիճակը: Մասնավորապես, կարգավորված չեն գործատուների, գործազուրկների և հիմնականում մասնավոր հատվածում զբաղվածների իրավական հարաբերությունները՝ ներառյալ աշխատանքի պաշտպանության, աշխատավարձի և բանվորների համար այլ կենսական հարցեր: Տեղի է ունենում աշխատանքի գերշահագործում, այդ թվում՝ աշխատուժի վերարտադրությունը չապահովող վարձատրություն, աշխատանքային ժամանակի երկարացման, աշխատանքի ինտենսիվության բարձրացման և սանիտարահիգիենիկ և հոգեֆիզիոլոգիական նորմաներին չհամապատասխանող աշխատանքային պայմանների կիրառման ձևերով:[15]

Դասական կապիտալիզմի երկրներում օրենսդրորեն կարգավորվում է բանվորների կարգավիճակը, պաշպանվում են նրա իրավունքները: Իսկ Հայաստանում վայրենի կապիտալիզմի հաստատման ընթացքում ով ինչպես

---

[14] Ա. Մելքումյան, Աշխատանքի շուկայի ձևավորման հիմնահարցերը, Երևան 2002, էջ 16

[15] Ա. Մելքումյան, Աշխատանքի շուկայի ձևավորման հիմնահարցերը, Ե., 2002, էջ 18:

ուզում վարվում է վարձու աշխատողի հետ և իրոք, իրականացվում է բիրտ շահագործում: Մեծածավալ գործազրկությունը հարկադրում է բանվորին ենթարկվել գործատուների քմահաճույքներին և չբողոքել: Որպես կանոն գործատուի մետ աշխատանքի ընդունվելիս բանվորի հետ կնքվում է գրավոր պայմանավորվածություն: Կատարված ուսումնասիրությունը պարզել է, որ 1997թ. վարձու աշխատողների 8,6 տոկոսը կամ յուրաքանչյուր 12-րդը աշխատել է բանավոր համաձայնությամբ: Նման աշխատողների տեսակարար կշիռը հատկապես բարձր է եղել հյուրանոցների և ռեստորանների համակարգում /75տոկոս/, մեծածախ ու մանրածախ առևտրում /64տոկոս/, գյուղատնտեսության /գրեթե 56 տոկոս/ և շինարարության /50 տոկոս/ մեջ:[16] Այս վիճակը հրամայաբար պահանջում էր ընդունել նոր աշխաքանքային օրենսգիրք, որը կպաշպաներ վարձու աշխատողների շահերը:

Դիտարկումները ցույց են տալիս, որ մասնավոր գործարարները և անգամ աշխատանքի ընդունվող գործազուրկները հարկերից խուսափելու նպատակով շահագրգռված չեն կնքել օրինական աշխատանքային պայմանագիր, ինչը ծնում է օրինախախտումներ, աշխատանքային կոնֆլիկտներ գործատուների և աշխատողների միջև /անհիմն աշխատանքից ազատում, աշխատավարձերի չվճարում, անհիմն տուգանքների նշանակում, ոչ նորմավորված աշխատանքային ժամ, չնչին աշխատավարձ և այլն/: Հանրապետությունում 2002թ. կային 125 հազար թաքնված զբաղվածներ, ովքեր աշխատում են, ունեն բարձր եկամուտներ, հանրօգուտ աշխատանքով են զբաղվում, բայց սահմանված կարգով գրացված չեն՝ խուսափելով հարկերի և սոցիալական ապահովագրության վճարումներից: Թաքնված զբաղվածները երկու ձևով են հանդես գալիս. մի դեպքում աշխատում են գործատուների մոտ, որոնք նրանց համապատասխան ձևով չեն գրանցում, մյուս դեպքում թաքնված զբաղվածը հանդես է գալիս որպես անհատ ձեռնարկատեր և դարձյալ չի գրանցվում: Նման օրինախախտումները հատկապես այն տնտեսվարող օբյեկտներում են, որոնք վայելում են իշխանությունների հովանավորությունը:

Հայաստանի Հանրապետությունում սահմանված է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ բաղկացած 41 ժամից, այսինքն՝ 1 օրվա աշխատաժամերի քանակը հասնում է 8 ժամի՝ չհաշված շաբաթ օրը: Սակայն շատ հիմնարկներում միջին աշխատաժամանակը տատանվում էր 10-14 ժամի և նվազագույնը 6 օր աշխատանքային շաբաթի սահմաններում: Ընդ որում տվյալ հավելյալ աշխատաժամերը վճարվում են սովորական աշխատաժամանակի չափանիշներով /բացառությամբ արտասահմանյան մի շարք ֆիրմաների/:

Այսպիսի է հայկական նորաբույծ վայրենի կապիտալիզմի իրական դեմքը: Աշխատողների նկատմամբ գործատուների նման վերաբերմունքը

---

[16] Նույն տեղում՝ էջ 18:

բացատրվում է նաև գործազրկության գոյությամբ: Մարդիկ համաձայնվում են ամեն մի պայմանի՝ միայն թե աշխատանք ունենան և հացի փող վաստակեն: Որոշ գնահատումներով /աղբյուրը՝ 2001թ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ կառավարության հաշվետվությունը/ երկրում գոյություն ունեն առնվազն 300 հազար գործազուրկ: Անկախ փորձագետների ուսումնասիրություններով երկում թերզբաղվածություն ունեն աշխատուժի 40-50 տոկոսը: Բացի այդ՝ զբաղված բնակչության զգալի մասը աշխատում է ոչ իր մասնագիտությամբ:[17]

Աշխատաշուկայի այսօրինակ լարվածությունը պայմանավորված է.

1. աշխատանքային օրենսգրքի և բնակչության զբաղվածության մասին օրենսգրքի անկատարություններով,
2. զբաղվածության ծառայությունների ոչ լիարժեք գործունեությամբ,
3. աշխատողի և գործազուրկի աշխատանքային իրավունքի շահերի պաշտպանությանը նպաստող կազմակերպությունների /արհմիություններ և հասարակական կազմակերպություններ/ անբավարար գործունեությամբ,
4. խնդրով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների համագործակցության և նրանց մեխանիզմների բացակայությամբ,
5. աշխատանքային շուկայի անկառավարելիությամբ:

Արհմիությունները, որոնք կոչված են բանվորների իրավունքների պաշտպանության, նոր շուկայական հարաբերությունների պայմաններում կորցրել են իրենց առանց այդ էլ նվազագույն դերը:

Գործատուների կամայականությունը ակնհայտ էր: Նրանք իրենց հայեցողությամբ որոշում էին աշխատանքի տևողությունը, աշխատանքից ազատելու մշտական վախի մեջ պահում աշխատողներին և այդ ճանապարհով ստիպում աշխատելու բանավոր պայմանավորվածությունից դուրս: Աշխատաշուկայում գների մակարդակի վրա ազդելու պետության հիմնական միջոցը՝ նվազագույն աշխատավարձը, շարունակում է մնալ խիստ ցածր: Եթե 1992-94թթ. ընթացքում պետականորեն երաշխավորված նվազագույն աշխատավարձը վերանայվել է յուրաքանչյուր եռամսյակը մեկ, 1997թ. ընթացքում մնացել է անփոփոխ և միայն 1999թ. ավելացել է հնգապատիկ՝ հասնելով 5 հազար դրամի: Դրան զուգահեռ 2-3 անգամ ավելացել են պարենային և ոչ պարենային ապրանքների գները: Հանրապետության մեկ շնչի հաշվով նվազագույն պարենային զամբյուղը կազմել է 18 հազար դրամ:[18]

---

[17] «Իրավունք» N 92, նոյեմբեր, 2002թ.:

[18] Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1996, էջ 69, Հայաստանի հանրապետության:

Ի դեպ, ցածր աշխատավարձ ասելով նկատի է առնվում ոչ միայն նրա չափը, որը չի ապահովում անհրաժեշտ կենսապայմանները, այլ նաև այն, որ կատարված աշխատանքը չի վարձատրվում դրան համապատասխան:

Այսպիսով, նոր պայմաններում վարձու աշխատողների խումբը գտնվում էր կատարյալ անմխիթար վիճակում, որը ճնշվում էր նոր ձևավորվող հայկական բուրժուազիայի կողմից: Օրենսդրական դաշտի բացակայության հետևանքով չէին կարգավորվում բանվորների ու գործատուների հարաբերությունները:

Սովորաբար գործատուն աշխատանքային գործունեություն է ծավալում այլ հարթությունում, այսօրվա վարձու աշխատողը խիստ տարբերվում է նախորդ շրջանի բանվորներից, ունի այլ հոգեբանություն, այլ պատկերացումներ, այլ սոցիալական կարգավիճակ: Չկա մի կազմակերպություն, որը լրջորեն զբաղվի բանվորների ներկա վիճակով, արհմիություններն էլ համարյա չեն գործում: 2004թ. հանրապետությունում 12000 տնտեսավարող օբյեկտներից միայն 600 –ում կային արհմիություններ, այսինքն՝ 0,5 տոկոսում:

Քանակականի հետ միասին բանվոր դասակարգի կազմում տեղի են ունեցել որակական խոշոր փոփոխություններ ոչ թե աճի, այլ անկման ուղղությամբ, կադրային որակյալ բանվորությունը փոշիացավ, դադարեցին գործելուց բանվորների վերապատրաստման դասընթացները: Իսկ բանվորության որակական կազմի նկատմամբ պահանջները գնալով աճում են. նախ գիտատեխնիկական առաջադիմությունն առաջադրում է բարձրորակ բանվորական կադրերի կարիք և այնուհետև, մասնավոր սեփականատեր գործատուն դարձել է խստապահանջ աշխատողի նկատմամբ: Բացի դրանից լայնածավալ գործազրկության պայմաններում ուժեղացել է աշխատանքային տեղերի համար մրցակցությունը: Այն դեպքում, երբ մի տեղի համար հավակնում էր մոտ 20 գործազուրկ, դժվար է տեղավորվել աշխատանքի: Զբաղվածության հանրապետական կենտրոնից 10 գործազուրկ է ուղարկվում, որպեսզի գոնե մեկն ընդունվի գործատուի կողմից: Վերջին տարիներին զբաղվածության հանրապետական կենտրոնը կազմակերպում է գործազուրկների վերապատրաստում: Յուրաքանչյուր տարի 500 գործազուրկ է վերապատրաստվել, որոնց մեծ մասն ընդունվել է աշխատանքի: Անբավարար էին գործազուրկների վերապատրաստման և կրթության ծախսերը: 1999թ. դրանք կազմել են աշխատաշուկայի ընդհանուր ծախսերի 2,1 տոկոսը:[19] Գործազուրկների վերամասնագիտացմանն ու որակավորմանն ուղղված միջոցառումները նույնպես արդյունավետ չեն: 1998թ. ՀՀԾ կողմից վերապատրաստվել է 345 գործազուրկ, 1999թ.՝ 441, 2000թ. նախատեսված 933-ի փոխարեն՝ 612 գործազուրկ, որոնց

[19] Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան 2001, էջ 103:

70 տոկոսն է տեղավորվել աշխատանքի:[20] Բանն այն է, որ անցման շրջանում ավելի խորացավ անջրպետը արտադրության և ուսման միջև: Շրջանավարտը, արտադրություն մտնելուց առաջ չունենալով գործնական փորձառություն, մնում է անօգնական, մինչև որ ծանոթանում է արտադրությանը և սովորում է այն վարել: Աշխատաշուկայում որոշ մասնագիտությունների գծով առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը վկայում է, որ չկար միասնական քաղաքականություն, որը հնարավորություն կտար կրթական համակարգին անմիջապես արձագանքելու աշխատանքի պահանջարկի փոփոխությանը: Բացի դրանից՝ նախկին միջնակարգ պրոֆտեխնիկական ուսումնարանների համակարգը գրեթե կազմալուծվեց, և բավականին շատ բանվորական մասնագիտություններ պարզապես մոռացության մատնվեցին: Ուսումնական հաստատություններն իրենց տեխնիկական զինվածության մակարդակով, որակյալ մանկավարժական կադրերի պակասի պայմաններում, այլևս չէին բավարարում գործատուների կողմից ներկայացվող պահանջներին: Նաև այդ պատճառով կրճատվում են աշխատատեղերը: Այսպես, 2002թ. փակվել կամ կրճատվել են 1887 աշխատատեղեր, որոնցից 1010-ը բանվորական էին:[21] Բանն այն է, որ գործազուրկների շարքերում տարբեր աշխատանքային տարիքի /50 և ավելի/ մարդկանց տեսակարար կշիռը բավականին բարձրացել է: Գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում գրեթե անլուծելի են այդ տարիքի մարդկանց վերաորակավորման, նոր որակ ձեռք բերելու խնդիրները: Այդ տարիքի բանվորները դուրս են մղվում նաև ավանդական արտադրությունների մասշտաբների նեղացման տնտեսության ճյուղային կազմի փոփոխությունների համընթաց: Այնպես որ բանվորական կադրերի որակավորման բարձրացումն առաջադրում է նոր, ավելի բարդ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է պետության, պատկան կազմակերպությունների նպատակասլաց աշխատանք, որը բացակայում է: Բանվորների որակավորման բարձրացման նախկին արդյունավետ ու բազմազան համակարգը վերացավ ու չփոխարինվեց նորով: Այս ամենի հետևանքով բանվորների մի մեծ հատվածը դարձավ գործազուրկ և չկարողացավ իր տեղը գտնել ձևավորվող աշխատանքային շուկայում:

---

[20] Նույն տեղում:

[21] «Իրավունք» N14, փետրվար, 2003թ.: